

Պոլսեցիին համար «յաւիտենական սեր»-ն անելի տաժանելի բան քիչ կայ: Յմահ սերը զինքը կը տանի միօրինակութեան: Եւ Պոլսեցին անօրինակ Յայ մըն է:

Ան քաջառողջ է՝ իբրեւ Բիւզանդացի, հիւանդ է՝ իբրեւ Յայ ու թաղած են զինքը իբրեւ Յայաստանցի:

Կրնայ յարութիւն առնել, իբրեւ հայ քրիստոնեայ, եթէ կազմուի մեծ Յայաստան մը, ամեն յարմարութիւններով, բոլոր հանգստաւտութեամբ: Սանկ երիտասարդուհի Յայաստան մը՝ ընկողմանած սնդուսներու, մետաքսներու, ժանեակներու եւ ժապաւեններու մէջ: Ահա այն ժամանակ Պոլսեցին կ'երթայ Յայաստան՝ իբրեւ կնամեծար կամ շրջիկ. կը յուզուի, կը փղծկի, կը գրէ ոտանաւորներ, նուէրներ ալ կ'ընէ եւ քաջաբար ակոյայ մըն ալ քաշել կուտայ այնտեղ, իր արիւնով ալ ոռոգած ըլլալու համար իր «անուշիկ» հայրենիքին հողը:

Պոլսեցիին բերնին մէջ հայերէնը նուրբ է, անոյշ եւ մշակուած, երբ, անշուշտ, գրական լեզուով կը խօսի: Իր սեփականութեանց ամենէն ներկայանալի մասն է ան: Մեղք սակայն, որ Պոլսեցիին յիշողութիւնը տկար է եւ իր աննման հայերէնը շուտ կը մոռնայ:

Պոլսեցին երբ ըսէ.

-Հայերէնը դժուար կը խօսիմ...

Ըսել կ'ուզէ.

-Ֆրանսերէնը սահուն կը խօսիմ...

Իսկ երբ ըսէ.

-Հայերէն չեմ գիտեր.

Ըսել կ'ուզէ.

-Լեզուագետ եմ:

Ծիշդ է, որ Պոլսեցին յառաջացած է լեզուագիտութեան մէջ, ինչպէս լեզուագարութեան:

\*

Պոլսեցին երկար-բարակ բաներ շատ ունի: Հասակը երկար է, միտքն ալ երկար է, ձայնը երկար է, ոտքը երկար է ու, մարմինը համաչափ ըլլալով, ձեռքն ալ երկար է: Չկարծուի, թէ ձեռքը երկար ըլլալուն համար՝ կը գողնայ վանքին հաւերը: Զաւ լիցի: Ան ողջ